

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՎՐԵԺ ՄԱՐԿՈՍՅԱՆԻՆ
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՄԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱԽԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՎՐԵԺ ՄԱՐԿՈՍԵԱՆ,
ՈՐ ՅԵՐԵՒԱՆ**

Միրելի պրն Մարկոսեան,

Այսօր ուրախ առիթն ունենք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Վեհաբանի նուիրական այս յարկի ներքոյ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարձր գնահատանքը բերել Ձեզ՝ ազգանուէր ու եկեղեցաշէն Ձեր արդիւնաւոր ծառայութեանց համար:

Երկար տարիներ ճանաչում ենք հաւատաւոր հայորդուդ եւ քաջածանօթ ենք Ձեր զօրեղ հաւատքին, զոհողութեան պատրաստականութեանը, մեր Հայրենիքի կեանքին բերած Ձեր վաստակին: Հասարակական կեանքում հասնելով յաջողութիւնների, Դուք գնահատելի ծառայութիւններ էք մատուցում մեր ժողովրդին՝ սատարելով հայորդեաց բարօրութեանն ուղղուած տարբեր ծրագրերին: Գոհութիւն ենք մատուցում առ Աստուած, որ ազգանուէր ու հայրենասէր ոգին զօրեղ է հայորդեաց սրտերում՝ առաջնորդելով բարի իրագործումներին:

Որդիական ջերմ սիրով Դուք նախանձախնդիր էք նաեւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու շէնութեանն ու պայծառութեանը: Շարունակելով մեր Եկեղեցուն օգտակար լինելու պայծառ աւանդները, որոնք դարերով խնամուել ու պահպանուել են մեր ժողովրդի հոգում, Դուք հաւատաւոր ու ազնիւ ոգով ստանձնեցիք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Վազգէնեան մուտքի կառուցման հովանաւորութիւնը, որով առաւել բարեզարդուեց ու գեղեցկացաւ Մայրավանքի շրջակայքը: Մեր Սուրբ Եկեղեցուն մատուցած Ձեր ծառայութիւնները արդիւնաշատ են նաեւ Սուրբ Էջմիածնի հրատարակչական առաքելութեանը «Տիգրան Մեծ» տպարանի բերած կարեւոր աջակցութեամբ: Յիշաւի, Ձեր ընտանիքի անունն այլեւս անբաժան է Սուրբ Էջմիածնի պատմութիւնից եւ մշտապէս աղօթքով ու բարեմաղթանքներով պիտի յիշուի երախտագէտ հայորդեաց կողմից:

Բարձր գնահատելով Ձեր մատուցած ծառայութիւնները մեր Սուրբ Եկեղեցուն ու հաւատաւոր ժողովրդին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով հայցում ենք Ամենակալ Աստծուց, որ Իր հանապազ օրհնութեան ներքոյ պահի ու պահպանի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ յաջողու-

թիւներ պարզեւելով բարի ու հայրենասնուէր բոլոր իրագործումներում:

Թող ընտանեկան Ձեր յարկը շնորհընկալը լինի երկնատուր բիւր բարիքների եւ Աստուծոյ առատ ողորմութեան:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 29-ն Սեպտեմբերի
Յամի Տեառն 2007 եւ ի թուին հայոց ՌՆԾԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 433